

20 Փարս

Համակ կամ որ եւ իցէ գրութիւն պետք է ուղղել
ԱՌ ՏԵՐԻՆՈՒԹԻՒՆ
Ծ Ս. Ղ. Ի. Կ. Եւրոպայի
Կ. Պոլիս, Էսկի Չապիթի փողոց թիւ 61
Ե. ՇԱՀԻՆ Կ. ՊԵՏՐՈՒՐԱՆԻ տպարանը

درعليه ده اسكي ضطليه سوقاغنده نومرو ٦١
(نشان برريان مطبعه)

Direction du Journal ZAHIK
Constantinople rue Eski Zaptié No. 61
chez M. NICHAN BERBERIAN



Ազգային, Բաղաժական, Գիտական եւ Գրական

20 Փարս

ՀԱՍՏԱՆՈՐԻՒՄԻՆ

Կ. Պոլիս	Համար տարեկան	20 դրուշ
Գաւառներու	» տարեկան	30 »
Ստոր երկրներու	»	8 ֆրանք

Թղթատարութեան ծախքը Ծաղիկի վարչութեան կը պատկանի :

Տնօրէնութեան ուղղութեամբ գրութիւնք ետ չեն տրուիր :

Ազգերը կամ բերանացի եւ կամ համակով կը սուկարկուին :

ՄԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆ ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹԻՒՆԸ

Շատերը իրաւամբ կը դարձան թէ ինչու մեր ազգային վարժարաններուն մէջ պէտք եղած կարգապահութիւնը չկայ. ես, իբրեւ ուսուցիչ, հարկ կը համարեմ այս մասին քանի որ բացատրութիւններ եւ խորհուրդներ տալ :

Մեր դպրոցներուն մէջ տիրած կարգապահութեան պակասութեան գլխաւոր պատճառներն երկու են. դաստիարակչական պակասը եւ դպրոցական շէնքերու անցարմարութիւնը :

Այս երկու պատճառներն մէկ օրէն մէկ տարիէն բաժնաւ անկարելի է. հետեւեալս կարգապահութեան խնդիրը ատոյժանական բարելոյման խնդիր մըն է :

Դաստիարակը, որ դպրոցին կարեւորագոյն պատճառն է, մեր մէջ ի՞նչ ամսական կ'աւելնէ. ընդհանրապէս երեք չորս հարկուր դուշ. ինչու ուրեմն խոստովանեմք ըլլաւ ծայր ատոյժան ազգային մարդը գէտ, որունը ընտանեկան հոգեբով ճշնոյթով կ'որոշուցած են իրենց ձեռնարկելու թիւն ոգին. քիչ բացարձակեամբ նիւթական այս առարկան ներքին ունեցող մարդիկ չեն կրնար ո՛չ իրենց ապաշխարս արուեստը սիրել եւ ոչ ալ պէտք եղածին պէս աշխատիլ :

Ձուրկ նիւթական վարձատրութեան, երկրակալ տգէտ հոգաբարձուներու յոխորտանաց, վարդապետարաւ մնալու երկիւղը Գլխաւորի ստորին պէս իրենց գլխուն վրայ կեցած՝ անոնց բարոյական քայլութիւնը շուտով տեղի կ'աւանդէ, եւ, որչափ ժամանակ որ այդ գործով զբաղին, չեն յառաջադիմեր իրենց արուեստին մէջ :

Քիչեր, անշուշտ նոյն իսկ այս տեսակ պարագաներու մէջ անդամ, կրցած են յառաջանալ, բայց անոնք այնքան քիչ եղած են եւ որ կրնանք առհասոյ ըսել թէ Աղբը դաստիարակ չունի :

Դաստիարակ մը երկրորդական վարժարանէ մը վկայեալ ըլլաւու է, մանկավարժական ընթացք մը ըրած՝ եւ պատուաւոր դիրք մը ունենալու է : Հետեւեալս Աղբը վարժարանէ մը ունենալու է՝ պէտք եղած դաստիարակները պատրաստելու համար. բայց յիշատակուող աշակերտներէն ո՞ր պիտի ուզէ ստանձնել ատանկ անշահ դուր մը. ամենէն խելացիները անշուշտ վարժապետանոցին դրանք առջեւն անդամ պիտի չանցնին :

Ըսել է լաւ դաստիարակներ ունենալու համար անոնց շատերէ աւելի անհրաժեշտ է. առ նուազն 7—800 դրուշ, այսինքն գումար մը աղտերական եւ դատաւական վարժարաններէն մեծ մասը չկրնար վճարել :

Այս ըսածներէն յայտնի կ'երեւի որ մինչեւ որ Աղբային վարժարաններուն եկամուտը չշատնայ լաւ դաստիարակներ չեն կրնար ունենալ : Եւ որ պիտի շատնայ այդ եկամուտը, տարբերակ տարիէն... մի յաւանք, մինչեւ

որ մեր հարուստները կարեւոր դասարաններ կ'աւելնէ՝ դպրոցներուն եկամուտները անհրաժեշտ չունին : Երկրորդ, գլխաւոր պատճառն դառնում է շէնքերուն անցարմարութեան, այդ ամենուն յայտնի է իբրեւ վնասակար տղայաց առողջութեան. բայց շատերը չեն գիտեր թէ այդ անցարմարութիւնը մեծապէս կ'ազդէ դպրոցական կարգապահութեան վրայ ալ :

Տղայք իրարու քով խիտ առ խիտ նստարաններուն վրայ նստած շարունակ իրարու հետ յարաբերութեան մէջ են. փոքրիկ չարահիններուն ըրած պղծիկ մեղքերը թուել անկարելի է :

Ուստի նախ դպրոցի մը սրահները եւ դասարանները բաւական ընդարձակ ըլլալու են, անոնց ծաւալն աշակերտաց թիւոյն հետ որոշեալապէս կ'համեմատուի մը ունենալու համար. այս համեմատութեան լաւութիւնը եւ սրահներուն ու դասարաններուն լաւ կերպով օգտակարութիւնը լուսաւորութիւնը անշուշտ մեծապէս կ'ազդեն տղայաց առողջութեան վրայ :

Եւ երկրորդ, տղայք մեկուսացուելու են, այսինքն իւրաքանչիւր տղայ ունենալու է իւր միտանի գրասեղանը, իւր միտանի աթոռը իւր ալ ու ձախ կողմը ուղղաձիգ փայտեայ միջնորմները. այս միջնորմներուն վրայ դադարաւոր մը առաւ համար, կ'ըսեմ թէ անոնք սրահին տախտակամանին վրայ հաստատուած ըլլալու են. մէկ մէկը լայնութեամբ, մէկ ու կէս մէկը բարձրութեամբ եւ չորս սանթիմէթը հաստութեամբ :

Այս միջնորմները հարկաւ աշակերտները պիտի մեկուսացնեն եւ շատ մը անկարգութեանց առաջը անցնելով՝ խեղճ դաստիարակին գործը պիտի դուրսցնեն :

Անշուշտ ըսել չեմ ուզեր թէ մեր դպրոցները բակելով՝ աւելի ընդարձակներ չինենք. այլ, երբ նորանոր շէնքերու պէտք ունենանք, այս դրութեամբ չինենք :

Գաղաքներու, նա մանաւանդ մայրաքաղաքի մէջ, իմ այս ըրած առաջարկս դժուարութեան մը կը բաղկնի, այն է հազարու սղութիւնը, բայց աւաններու եւ գիւղերու մէջ ու է խոչընդոտ մը չեմ տեսնելու տառապանքներու իրագործման :

ԵՐԹՈՒՆԵՒ ԳԱՐՄԱՆԱՆ

Ք Ր Ո Ն Ի Կ

Բեմական պերճախօսութեան գլխաւոր չըջանն է Մեծ-պահնը :

Իրական փառք մ'է ցոյց տալ եկեղեցւոյ բեմին մօտ մէջ միեկուտ ամբողջ հմտութեան մը խոստովանել եւ օգտուան անհամեմատ կերպով աւելի է, երբ դաստիարակ արմատաւորութեանց տէր հոգիները նոր եւ միակ կազմաւոր մը մէջ ձուլուին :

Ահա տեսէ՛ք կատարեալ սկեպտիկեան մը կրօնային հաւատարմութեան մասին, որուն միտքը կ'ըմբոստանայ եկեղեցի երթալու բարեպաշտական պէտքին դէմ. բայց, ինչ դարանք, ան իսկ անտարբեր չըլլար բանին հրապոյրներուն : Տարօրինակ ձգտութեամբ մը ա-

նոր քայլերը դէպի եկեղեցի կ'ուղղուին եւ լսել կ'ուզէ, թէ պէտք քանիք արդ մը, հաւատոյ համարութիւններ, որոնցմէ սակայն լուսաւոր հետք մը պիտի մնայ մտքին մէջ. կը զիջին իւր պատճառաւորութեանց հզօր զէնքերը. անոր ներքին քանդակներուն վրայ նոր չէնքի մը հիմքեր պիտի ձգուին տակաւ : Եւ այս պիտի ըլլայ լաւ պատրաստուած բարոյական մէկ յաղորդութիւնը :

Հենով ինձմէ քննադատել այն եկեղեցականն՝ որ ժողովրդեան կը ներկայանայ սուսնայ անգիտելի անգիտելի լաւ իւր խօսելու նիւթին վրայ, առանց պատրաստութեան. այլ խորագէտ կը ցաւիմ այդպիսոյն վիճակին վրայ՝ որ իւր տգիտութիւնը կը հանդիսանայ միայն եւ դադարաւորութեամբ աւանդուն ծաղուն նշանակ կ'ըլլայ, թող լրագրի մը սխալները չարձանագրեն այդպիսոյն անունը. սակայն ունիւնը գիտելու ընդհանուր պարագայ մը որ դատարարութիւնը չ'պիտի ըլլայ Միշուկեա ի՛նչ հաճոյք պիտի զգար ան, երբ գեղեցիկ հրապարակախօսութեամբ մը իբրեւ կարողութեամբ ողջունուէր աւելի կողմէ : Ներկայից ներքին գոհունակութիւնը պարզ ցոյցացում մը յառաջ պիտի բերէ անոր դէմքին վրայ, անոնց ձեռքեր պահ մը բնագոյնաւոր պիտի մենաւ ծախսաւոր դուռնալիք, եթէ այս բանին ներքին տակաւ մեր եկեղեցական նուիրապետութիւնը : Այս պատիւը կը վայելն ուրիշ քրիստոնեայ եկեղեցիներու հայրեր եւ սակայն Հայ եկեղեցին ինքնին արդէն իրեն կանոն ըրած է սրբոյն Հերոնիմոսի եկեղեցականներու ուղղած պատուէրն. «Եկեղեցւոյ մէջ խօսելու ատենը՝ ունիւղիւրները մեծապէս արուստութեան մի՛ շարժեր, այլ հաւաքանքի. քու մեծ գովութիւնը՝ անոնց արցունքն է » :

Կեցողութիւնը անկապ ու անցարթիւ նախադասութիւններու տարափին ենթարկելէ աւելի լաւ կ'ընէ անհմտ եկեղեցականն՝ որ ուրիշ մը սեղմ եւ կուս իմաստներով պատրաստած քարոզը քոյք ընէ. թէ պէտք ասի օտարին փետուրներով զարդարուլ մ'է. բայց դարձեալ մինչեւ մէկ աստիճան ներքին է :

Երանի՛ թէ ձեռնհաս եկեղեցական մը պատրաստէ՝ քարոզի գիրք մը, որ լաւագոյն ուղեցոյցն ըլլայ բարի կամեցողութեան տէր բազմաթիւ հայրերու ըստ այնմ խօսիլ :

Ընտիր քարոզի մը ունիւղիւրները մըտքի պահանջուն մը անբաժան է լաւ զբոսքի կարողութեան հաճոյքը : Բայց շատեր պիտի ըսեն. «Գիտէ՞ք որ հայրերն հրատարակութեանց չըլանակը մեծանայ, բայց մեր միտքը լաւ անշահ բան մը կ'արտադրէ » : Իրաւացի է այս գանգաւ եւ սակայն եղածին իսկ անտես առնել ներքին չէ. կը փափաքեմ որ լաւ ուսումնասիրութիւն մեր ընթերցողը. անոր հանդէս ունի իւր սակի երակները. պէտք է ուրեմն անսխալութեան առաջինը մը ըլլայ այն :

Թող ամեն գրասէր անձ ուղղութեամբ իր զարձնել եղածին վրայ եւ աշխատի իւր գրագործութիւնը ձոնացնել այն գրքերով, որոնք հոս մտնելու արժանի են : Դժբաղդար, կ'ըսուի, շատեր անգիտութիւն իսկ չունին թէ Շէքսպիր, Հէրցլի, Սթենդալ, Դոստոյեւսկի, Կարոլ Լիւթարթ, Բոնիպարտ, Զոյնգի, Այս տարի ինձմէ խնդրուեցաւ որ Հաւաքածոյն մէջ յիշեմ թէ Աղբը. է. քի. Փանոսեան Շուրք եւ Յովսէփ հրատարակած է : Զարմա-

նօք հարցուցի. միթէ կ'ան տակաւին չգիտցողներ այդպիսի գրքի մը գոյութիւնը, որ տասը տարուան կեանք ունի արդէն : Ըսին՝ խի՛տ շատեր :

Կը փափաքեմ որ իմ ընթերցողներուն առջեւ անձանց չմնան նոր հրատարակութիւններ, որոնցմէ կ'ուզեմ յիշել Կ. Տիւրեանի Սեւ ծովու Ռուսական եղբոր անուն գործը, Վիկենայի տպարանին լոյս տեսած, որ իւր վճիտ լեզուով, գեղեցիկ եւ սիրուն նկարագրութիւններով եւ հետաքրքրաշարժ պարունակութեամբ Այստեան յորեկանի վայելելու շուէր մ'է. նոյնպէս չեմ ուզեր անյիշատակ անցնել Վենետիկ մասնակէն հրատարակուած երկու գրքեր, Արամեանի Բեքուամը եւ Հիւն հաւաք Հայրը :

Գրչի անօրինակ վատտակաւոր մ'է Աշագուրկի Կէզրեան Թագուս պատուելին, որ այս պահուն կաշխատի իւր թարգմանած կիսական մէկ գիրքը ի լոյս ընծայել մի քանի բարեօրէն ազգայնոց ձեռնտուութեամբ : Բաժանեցութեան արժանի է Աշագուրկի պատուելին, որ իւր բնական դժուարութեանց ձախուսակ, իւր գաղափարանց մէկ կարեւոր անդամն է չգոյութեամբն իսկ գիտցած է զոչք ընթերցող լաւագոյն գրագիրներուն, իւր հմտութիւնով եւ իւր բազմաթիւ յատկութիւններով :

Ուսուցիչներու եւ դրագէտներու մեծ գերազանցանքի մէկ անդամն է ան, եւ իւր կիսականները ինձ կը թելադրէ շատ անհամար յեղեղեղաւ խորհուրդ մը նորոգի հրատարակ ձանել, այն է ուսուցչաց ազգային համար խնայողական անտուկի մը հաստատութիւնը :

Յառաջիկայութեան բաղձանք տա՜ծ ուղեք իրաւար կը պահանջեն որ, որպէս զի կոչում ունեցող երիտասարդաց համար ուսուցչական ասպարէզը խոշոր ընտրելու մը չըլլայ, դաստատուած թուականները իրաւար կը պահանջեն վարդապետական համար մը թողած է. այլ եւ այդ գերազանցանք մը ձեռք մակեղու եւ տարածելու համար՝ ամեն իւր ժամանակակից համազօր դեռատի քոյրերուն ու եղբայրներուն :

ՍԻՄՈՆ ԳԱՐԱՄԱՆԱՆ

ՍԱԽԱՆ ՊԱՏՈՒԵԼԻՆ

Իրեւ ներածական՝ երկու խօսք : Մեր մէջ, ինչպէս նաեւ ամեն ազգերուն, կը գտնուին :

Կան որ իրենց համար կը գրեն, եւ գրելու ձեռք միայն կը փնտռեն : Կան ալ որ՝ ուրիշներուն համար կը գրեն, եւ գրելու նիւթը միայն ընտրողաբար կ'որոշեն :

Գանձ՝ ճատ կրնա գտնել հրապարակին վրայ՝ թէ՛ ձեռք եւ թէ՛ նիւթը միանգամայն զրկող եւ ողջագործող : Եւ շատ անգամ փորձած եմ, եւ ձեռք զոհած՝ նիւթին, վանալով որ՝ լեզուին ու ձեռքի հետ խաղացած ատենս, մի գտնէ իմաստը կորսնցնեմ, ինչպէս որ իմաստին հետ մաքառած ատենս՝ թեւ լաւ լեզուն ու ձեռք՝ կամքն անկախ լընանմ :

Լաւ գրողներու շարքին մէջ ցանցատ են թուով թէ՛ ձեռք եւ թէ՛ նիւթը միանգամայն ներգաշակ կերպով ի գործ դնող գրագէտներ :

Ուստի, « առանց պայուսակի » ուղեւորող գրչէ մը՝ մի՛ սպասէք թէ՛ լեզուով եւ թէ՛ իմաստով համեմատելի կենսագրութիւններ :

Ինչ որ յանձնեմ, հրատարակեցէ՛ք :

Եթէ ո՛չ այսօր, գէթ օր մը՝ չնորհապարտ պիտի մնան Ձեզ՝ գրելու ձեռքն աւելի, գրութեան իմաստը փնտռող ընթերցողներ :

Սաւալանեալ ազգատոհմը՝ սերնդական բազմաճիւղ ընտանիք մ'է, տարածուած ալ եւ ալ հետաւոր եւ մերձաւոր քաղաքաց մէջ :

Սաւալանեանց բարեպաշտական յիշատակներ տեսած եմ յիշմիտին, յիշատակում, ի Սիւս, ի Պոլիս եւ այլուր :

Անցեալ գարնան՝ Սիւս ուղեւորութեանս ատեն, Կաթողիկոսանիստ Եկեղեցին մէջ տեսայ Ս. Աստուածածնայ վերափոխման մեծազօր պատկեր մը, որուն վերի մասը՝ Ս. Երրորդութիւնը կը ներկայացնէր, իսկ երկրորդ կամ վերջի մասը՝ երկրորդական Առաքելոց մէջ՝ Տիարայրը՝ կոխած, նախաւոր դեռանք խաբող վիշապին վրայ, որուն զերանք պըտուղ մը նկարուած էր :

Այս եկեղեցական պատկերը կը կրէր հետեւեալ արձանագրութիւնը .

« Է յիշատակ յիշմիտ բնակեալ Սաւալանեան իշատուոր ազային եւ քեռն՝ եւ պարկեւ տիկնոջն ի Սուրբ Աթոռ Սըսոյ, ձեռամբ յերապոյցի Յօհաննէս եւ պիսկոպոսին. Սաւալան ի. Մ. Կ. Գ. » :

Շուրջ 17 տարիներ՝ բնակութիւնս ի Գառնիքի հաստատած ըլլալով, լսած եմ տեղւոյս բնիկներէն թէ, գրեթէ քառասուն տարիներ առաջ՝ արուեստագիտութեան Սաւալան Ռօզա՝ ի Գառնիքի Ս. Թագաւոր եկեղեցին այցելելով, եւրեւելի նկարիչ Ռաֆայէլի գծած Սուրբ Աստուածածնայ պատկերէն (1) գաղափարած է նկար մը, եւ Զմիւռնիոյ Ս. Ստեփանոս եկեղեցւոյն նուիրած :

Աւելորդ չէ ըսել թէ, Սաւալանեանց գերազանցանքի տաղանդաւոր պայազատութեան ու՛ն իմաստ ի Գառնիքի արուեստագիտական համար մը թողած է. այլ եւ այդ գերազանցանք մը ձեռք մակեղու եւ տարածելու համար՝ ամեն իւր ժամանակակից համազօր դեռատի քոյրերուն ու եղբայրներուն :

Երբ տղայ էի, Սաւալանեանցի մը հետաքրքրական մի մանրամասն կ'ընէիս մեզ :

Զմիւռնիոյ մէջ մեծահամբաւ վաճառական մ'է եղեր սա, որ ամեն տեղ՝ մեծ պատիւ եւ մեծ վարկ ունէր, կ'ըսէին : Սակայն եւրոպական վաճառականներու ալ մեծամեծ պարտքեր ստորագրած էր, որ օրուան առեւտրական տագնապին պատճառաւ՝ որոշեալ օրերուն մէջ չկրնար վճարելու կտահելուն, հնարք մը խորհր եւ գործադրել է՝ հրապարակին վրայ վարկալիքի չընելու համար ինքզինքը :

Ի՞նչ էր այս հնարքը, այս գիւտը :

Ո՞րուն մտքն էր անցնել :

Ծանօթ Սաւալան չինովի կը հիւանդանայ, ու տունէն դուրս իբր թէ մահամեծ վիճակի մը ենթարկուած ինքն տարածելու համար, իւր խոտուցանահայրն՝ առ ինքը կը հրաւիրէ, ու կ'սկսի իւր ապագայ կտակը կարգադրել :

Կը պատմեն թէ, կարծեցեալ հիւանդը՝ ի ներկայութեան պատուաւոր ազգայնոց եւ օտարազգի վաճառականաց,

(1) Իմաստ. — Գառնիքի Ս. Թագաւոր եկեղեցին նոր վերաշինուած էր 1853ին : Տաւալան խալիպը չկար :

Հանրաժամօժ ծովանկար Աղա Յովհաննէս Ալիպազկի պատկերով եկեղեցին, պատկերին միջոցով չարի կ'առնուէր, եւ խալիպէն ինքն ինքն Ս. Աստուածածնայ փառաւոր պատկերը կը յղէ, որ այժմ աւագ խորանը զրուած է :

նախ՝ Զմիւռնիոյ Ս. Ստեփաննոս եկեղեցւոյն, Ս. Մեղրոսեան վարժարանին և տեղւոյն Սուրբ Լուսաւորչեան Ազգատնոցին կամ Հիւանդանոցին, և այլ բարեկամական հաստատութեանց ուրոյն ուրոյն պատիւանքի գումարներ կտակելէ յետոյ, կը բացազանջէ՝ « Մը նացեալ հարստութիւնս ալ անդամակի զաւակիս, որ իրեն պիտի օգտուի զատ, բոլոր վաճառականներուն ալ ունեցած պարտքերս նետքի նետքի վճարէ »:

Այս երեսփայտական կտակին վրայ՝ ոչ իրազեկ ներկայք կարի զգած ունեւոր, և օրհասականի մօտ եղող հիւանդին բարեգործական նպատակն՝ այլոց ալ օրինակելի ընծայելու մտօք, Զմիւռնիոյ օտարազգի բնակիչներէն միոյն մէջ ալ կարծեմ հրատարակել կը արուի, ի դիտութիւն բարեպաշտից, նա մանաւանդ, ի միամտութիւն՝ բոլոր օտարազգի պարտապահանջ վաճառականաց, որք մի միայն կը մտածէին թէ՛ ժամ յառաջ հիւանդը առողջանար, փոքր չէ որ իրենց աննեղեղներին քիչ մը ուշ գանձուեր են:

Եւ ահա այս հնարադիտութեամբ, առանց հիւանդին տաղանապ պատճառելու և անհիշելի խօսք մ'ընելու, այսած են բոլոր վաճառականներն համաձայնիլ եւ պարտուց դանձումը ոչ միայն յետաձգեալ, այլ և նորանոր քիչօք քիչ ըրած, ու անձաքանակ ապրանքներ տուած են:

Բաւական օրէն աւելի կը տեսէ այս սուտ-հիւանդութեան շրջանը. մինչդեռ անդին՝ Սաւալանեան վաճառատունը, ոչ միայն ժամանակին ու պարագայներուն յաջողութեան օգտուելով՝ դիւրութիւններ կ'ունենայ պարտքերն դադարեցնելու, այլ և ամբողջապէս վճարելու, այլ եւ մեծ ու կրօնի դրամագլուխ մ'ալ շինելու կը բաղդաւորի:

Շարունակելի

Ա. Յ. ԱՅՎԱԶԵԱՆ

Ն Ո Ր Ա Վ Է Պ

ԴԱՇՏԵՐՈՒՆ ՄԷՋ

(ԴՐԱՍԱՆՔԻՆ)

Երկու խորթները ըզրկուի էին, բըժարի մը ստորոտը, ծովագետեայ աւանի մը մօտ: Երկու գիւղացիները անբեր լեռանի մը վրայ չարաչար կ'աշխատէին մեծ ցիւլու համար իրենց պղտկները: Երկու տանը մէջ ալ չարապական հատ կար: Երկուքնեքն խօսելու ատուրընէ մինչեւ իւրիւրուն կը խաղար երկու մեքանիկ դուռներուն առջեւ: Երկու երկնադրոյնները վեց վեց տարեկան էին ու երկու կրտսերները տասնութիւնեակն ամուսն: Ամուսնութիւնները, յետոյ ծնունդները գլխի մէջ զուգընթաց կերպով իրարու յաջորդած էին երկու խորթներուն մէջ:

Երկու մայրերը, դէպին մէջ, հազիւ իրարմէ կրայայն որոշել իրենց արգանքի պտուղները, ու երկու հայրերը կը կը շփոթէին զանոնք գրեթէ միշտ, ահա նախ որ, երբ հարկ ըլլար կանչել առնոց մէջ, մայրիկը կը ստիպուէին առնուազն երեք անգամ պողալ. կանչուածին բուն անունը տուէ առաջ:

Երկու բնակարաններէն առաջինին մէջ — Ռօլբորի կայարանին ճամբէն դուռը ատեն — Ռիւֆալները կը բնակէին, որոնք երեք աղջիկ ու մանչ մը ունէին. իսկ միւս խորթներին մէջ Վալէնները կը նստէին, որոնք աղջիկ մը ու երեք մանչ ունէին:

Ասոնք, բոլորն ալ, մեծ դժուարութեամբ կ'ապրէին ապուրով, գետնախորտով, և առողջ օգով: Ծանոթները, իրենց սագերը ժողովող սագապահներու պէս, աստուծո ժամը երկուքն յետոյ կէս օրին, ու ետքը իրիկունը ժամը տասներկուքն, իրենց լակտաները կը ժողովին ճաշ տալու համար:

Տղաները իրենց տարիքներուն կարգաւ կը նստէին փայտէ սեղանի մը շուրջը, որ յետոյ տարիներու գործածութեամբ աղտոտ փայտեղութիւն մը առած էր, նստողներէն սեղանին բերանը հաղիլ կը հասնէր սեղանին մակերեսին: Իրենց առջեւ կը դուռէր խոր անակ մը, հացով լեցուն, որ թաթ-խուած էր գետնախորտ խառնած ջրով: Դա անհրաժեշտ խառնած ջրով, ու ամբողջ կարգը կուտէր այդ քիւիքը մինչեւ որ լաւ մը կուտանար:

Իսկ կիրակի օրը, որ ասօնի օր մըն էր ամենուն համար, կը հանուէր պտուղի մը մէջ կարմրեալ կտոր մը միւս, ու

հայրը կը վերջացնէր այդ ճաշը կրկնելով՝ « ամեն օր տոն պիտի ընեմ »:

Օգոստոսի մէջ օր մը, օրարական ետքը, թեթեւ կառք մը յանկարծ կեցաւ երկու խորթներուն առջեւ և դեռատի կին մը որ անձամբ կը կառավարէր այդ կառքը, ըսաւ իր ըզրկ նստող պարոնին:

— Ի՞նչ, նայէ, Հանրի, սա տղոց երամը նայէ, որչափ սիրուն են ասանկ փոշիին մէջ թաթխուած:

Պարոնը բնաւ պատմասան չի տուաւ՝ յափշտակուած իր սքանչացումով՝ որ միշտ մը, գրեթէ յանդիմանութիւն մըն էր իր անձին դէմ:

Կինը աւելցուց:

— Պիտի գրկեմ անոնք, ո՛հ որչափ կը փափաքէի անոնց պէս հատ մըն ալ ես ունենալ. սաւիկա՛, սա ամենէն պղտկը...:

Եւ, կառքէն ցատկելով տղոցը վըրայ վազեց, երկու պղտկներէն մէկը բռնեց, Ռիւֆալնեցը, ու բազկացը մէջ առնելով հրախառնօրէն պազուս դանի իր աղտոտ այտերէն, իր խարսկէք, ուրբուն և հոգով շարժած մազերէն ու թաթիկներէն, զոր պղտկը կը շարժէր անոր ձանձրացուցիչ դժուարեքներէն ճողորմելու համար, ետքը վերստին կառքը մտաւ ու յամբարայն մեկնեցաւ: Յաջորդ շաբթիւն նորէն եկաւ, ինքն ալ գետնին վրայ նստեցաւ, պարտիկը գիրկը առաւ, կարկանդակներով կտացուց գանի ու բոլոր միւսներուն շաքարեղէններ բաժնեց. ետքը, չարածիք աղկան մը պէս, խաղաց անոնց հետ, մինչդեռ ամուսինը անհամբեր իրեն կը սպասէր իր փայլուն կառքին մէջ:

Կինը ուրիշ անգամ նորէն եկաւ, պղտկներուն ծնողացը հետ ծանոթացաւ ու ալ սկսաւ երեւիլ ամեն օր գրպանները տասնոցներով և շաքարեղէններով:

Տիկին Հանրի տ'Օպիէն կը կոչուէր այդ կինը:

Առտու մը նորէն եկաւ, այս անգամ ամուսինը մէկտեղ ինչաւ կառքէն և առանց կենալու չարածիքներուն զով, որոնք հիմա լաւ կը ծանշային զինքը, ուղղակի գիւղացիներուն բնակարանը մտաւ:

Հոն էին անոնք, ապուրին համար փայտէ սեղանին բոլորքը շարուած, ամենքն ալ հիւրերուն կողմէ դարձան, ամենքն տուին ու սպասեցին: Այն ատեն դեռատի կինը ընդհատուած, դուռը բացեց և ձայնով մը սկսաւ խօսիլ:

— Սիրելի պարոններ, եկալ ձեզի տեսնելու, որովհետեւ կուզէի... կը փափաքէի հետս տանիլ ձեր... պղտկ մանչը...:

Դաշտեցիները սալած ու խեղացնոր, պատասխան չտուին:

Կինը շուրջ մը առնելէ ետքը շարունակեց:

— Մենք տղայ չունինք, առանձին ենք ես և ամուսինս, ձեր տղան պահենք պիտի... կուզէի:

Գեղջկուհին կը սկսէր հասկնալ գործը, ուստի փութաց պատասխան տալ:

— Եարթ թաւնիլ կ'ուզէք, ա՛հ, անկարելի բան է աս, անկարելի...:

Այն ատեն Պ. տ'Օպիէն միջամտեց:

— Կնոջս առաջարկութիւնը չի հասկըցաք, մենք որդեգրել կ'ուզենք ձեր տղան, որ նորէն պիտի գայ ձեզ տեսնել: Եթէ բարի մտք մը ըլլայ ան, ահա նախ որ ուրիշներն ալ հաւատան, ինքն մեր ժառանգորդը պիտի ըլլայ և եթէ պատահամար տղաները ունենանք, ինքն ալ հաւասարապէս մասնակից պիտի ըլլայ մեր ստացուածքին: Բայց եթէ չի համապատասխանէ մեր խնամքներուն, այն ատեն, իր չարահաւատութեամբ, իրեն պիտի տանք քսան հազար ֆրանքի գումար մը, որ իր անունով անմիջապէս նոտարի մը թով պիտի դրուի:

Եւ, որովհետեւ ձեզի ալ մտածել հարկ է, ձեզի պիտի տրուի՝ մինչեւ ձեր մահը՝ ամական հարկեր ֆրանքի թուով մը: Աղէկ մը հասկցա՞մ:

Ազգայնականութիւն, բոլորովին զայրացած, ոտքի ելած էր:

— Կ'ուզէք որ ձեզի՞ ծախենք Եարթութիւն, ա՛հ... չէ, չէ, աստուք մօրմէ մը խնդրուելու բաներ չեն, երբեք... աստիկա դարձելի բան պիտի ըլլայ:

Մարդը բան մը չէր խօսեր, ծանր ու մտախճ էր, բայց կը հաստատէր իր կընտրութեանը գլխի յաւորեալ շարժումով մը:

Յ. Մ. Ա.

Շարունակելի

ԳԱՐԱԿՈՒՄ

Որքան ընդարձակ է մարդկային իրաճեալը շրջանակն. մարդ մէն մի վայրկեան նոր հորիզոն մը տեսնել կը ցանկայ, նոր խորհուրդ մը կը ծնի ինքեան, իւր անյադուութիւն չունի սահման, իւր երազներ չունին իրականութիւն, իւր յօժարութիւն չգիտէր գոհունակութիւն:

Կը տարակուսէր այս մասին: Ահա ձեզ օրինակ մը:

Չուառ քարակոյի մը, իւր արհեստին մարդն, ամբար կրակներուն տակ կ'աշխատէր անդու. իւր վիճակէն դժգոհ, իւր կեանքէն ձանձրացած, կը կարծէր ամէն վայրկեան ծանրէի դժոխքը տեսնել իւր սեւ ուրուականներով լի. և ո՛հա յանկարծ կը տեսնէ դարացի ագարակապետը, որ կառքով մեծաշուք կ'անցնէր, մինչդեռ ինք կ'աշխատէր չարաչար և քիւրտն առուարար կը հասէր ճակատին. կարծես թէ կեանքն էր որ կաթիլ կաթիլ կը խուսափէր իրմէ: Գարակոյի վեր կ'առնուէր անքերն և խորին հաւատով մը կը բանայ շրթներն և կը գոչէ. ինչի՛ւ, ագարակապետը լինէի:

Թշուառին աղերսը լսելի կը լինի և ահա բարի հրեշտակը կ'ներկայանայ անոր, իւր բոյրերով կը զմեռէ անոր ապրած միջնորդուն և կը շարժէ իւր երկնադրոյն թեւերը. քարակոյի աչքած երբ կը դիտէ կրթնած իւր գործիքին վրայ, ահա ձայն մը կ'աւելան անոր. փափաքը կատարուեցաւ:

Իսկոյն քարակոյի կերպարանափոխ կ'ըլլայ և ինքզինքը փոխադրուած կը գտնէ շքեղ տան մը մէջ. կանչեցողն իւր ճակոյին կ'անհրաժեշտներն, իւր անձկութեանց և հոգեբու նշան, և մշտաթափ երկր-տապալութեան մը շուրջը կը փչէ անոր: Գեղեցիկ դրեաններ հազած, թանկագին խաղանքներու վրայ բազմած կը հրամայէ իւր սպասաւորներուն:

Եւ ահա օր մի չքով պտոյտ մը կը կատարէ. սպասաւորներով ընդ-չապառուած. բայց ագարակապետը կը ներգուի արեւէն և կ'ըսէ իւրովի. ուրեմն արեւն ինձմէ աւելի զօրաւոր է. ա՛հ, ինչի՛ւ թէ արեւ լինի:

Իսկոյն ձայնը լսելի կը լինի և բարեբար ողբն կ'ներկայանայ անոր և կ'ըսէ. եղար: Եւ ի վայրկեան ժամանակի անհուն միջոցին մէջ կը բարձրանայ և լուսոյ հեղեղներ կը թափէ ամէն կողմ. դայտեր, լեռներ, նոր կենդանութիւն կ'ընդունու. ծաղիկը իւր երեւոյն ցօղոյն վրայ նոր բոյր մը կ'ստանայ և մարդիկ բոլոր անոր շողերուն համար կ'ըմբայ-լին ի սրտէ. բայց ահա միթէն ամպ մը կը ծածկէ արեւն և քարակոյի կը հաւաքէ, ա՛հ, ինչի՛ւ ամպ մը լինէի: Դարձեալ կը կատարուի բազմաձայն իւր կողերէն. ամէն ոք սար-սարափափափ տուն կը վախչի հեղեղին չարաշատկութեամբ համար և միայն ժայռ մը կ'արհամարհէ ամէն տարափ և հոն ցցուած կը մնայ խրոխտաբար:

Այն ատեն նորէն կ'աղաղակէ. ինչի՛ւ, Ժայռ մը ըլլայի: Նոյն ժամանակ կը փոխուի հակառակաբար մը. բայց, ի՛նչ զարմանք, մէկն, ցնցոտիներ հազած, իւր ստորտը կը փորէր. անմիջապէս կ'ուզէ քարակոյի մը լինել: Ողբն այս անգամ ալ կը լսէ աղերսն և ահա երբեմնի քարակոյի կը գառնայ իւր նախկին փիճակին. ի զո՛ւր այնքան բաղձանքներ կը անուցանէր:

Եւ յիշատի տարապայման իրաճեալ թշուառութիւններն են: Ո՛հ, մարդուն կարօտալին աչքերուն տակ պիտի դրուի յաւետ անհունի՛ն տեսլականը:

Ս. Գ.

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԵՐԵՒԵՒԻ ՀԱՇՈՒՄԻՆԻՍՏԵՐՈՒՆ

Ն Ի Ի Թ Ը Ն

Դիտութեանց մէջ նորանոր ուղիներ բացող փորձարկի հանձարներուն մէջ Այգաք Նիւթընի (Իսահակ Նեւտոն) հանձարը արեւուն պէս միշտ պիտի փայլի:

Աշխարհ քիչ անգամ ծնած է այս կարգի մեծ և զօրաւոր միտք ունեցող մարդեր, որոնց սքանչելի գործերը քանի մը դարը անգամ մը միայն լոյս կը տեսնեն... յաւետ ապրելու համար:

Այս մարդիկ ճշմարտապէս մեծ են, վասն զի իրենց փեմ գործերը համայն մարդկութեան կը վերաբերին, վասն զի իրենց գործերը մարդկութեան ամէն աղաւթու մասերը կերպով մը իրարու կը մօտեցնեն:

Այգաք Նիւթըն ծնաւ 1642 թ. հոկտ. 25ին Անգլիոյ Լինքոլնշայր գաւառին Վուլթոթօր աւանին մէջ:

Թէ և սերնդական արհեստանոցի երկրաբանութիւն չեմ տար և ամէն մարդ հաւատարմ կ'ընէ, բայց պատմական ճշգրտութեան համար հարկ կը դառնամ ըսել թէ Նիւթըն սերնդաւ գաւառական արհեստական ընտանիքէ մը, որ երկու քաղաքներէն (Ուոլթոն, Վրէն և Զիւս) կէս մարմնոց շարժման վրայ ալ և այլ օրէնքներ գտած էին: Փալլէնոյ ծանրութեանց անկման վրայ գիտելու եւ ինչի՛ւ կը կերպարանայ զօրութեան վըրայ գործները՝ չորհանաւոր շարժմանց տեսութիւններուն (theories des mouvements circulaires) նախադրելուն էին:

Բէրլէր մոլորակներուն ոլորտները (orbites) ճանչցուած էր և կուսած էր նոյն իսկ տիեզերական ձգողութիւնը: Վերջապէս Հուլի շատ աղէկ հասկցած էր թէ մոլորակներուն շարժմանց պատճառը անոնց մէկ սկզբնական շարժման եւ Արեւիկան ձգողական զօրութեան բազմապիկան զօրութիւնն (Résultante) էր:

Փոքրիկ Այգաք կանուխէն կորսնցուց իւր հայրը, և մայրը միայն եղաւ անոր դաստիարակութեան առաջնորդը:

Երբ տասներկու տարեկան էր Վրէնք-նիւթի դպրոցը դրին զայն. ուր ստացաւ իւր նախախրթնութիւնը. և երբ գաւառական արհեստանոցի մը պէտք եկաւ անոր արհեստը սովորեցաւ, մայրը հանեց զայն դպրոցէն և անոր խորհուրդ տուաւ իրեն աւատական կարուածական գործերու վրայ: Բայց դեռահաս Նիւթընը զգուսնք կ'իմանար կեանքի պայքարին ստորնութիւններէն և իւր ուսման սկզբը վերջը կը հեռանայր ստորին զրաւունքներէ:

Ժամանակ մը վերջը միայն մայրը համարում գոյացուց թէ իւր գաւառի միայն գիտուն կրնար ըլլալ. ուստի Նիւթընի ծախմանը համախառնելով զայն վերադառնալ Վրէնք-նիւթի դպրոցը դրաւ:

Բիշ ժամանակ ետքը՝ Բիշմարքի երբորդութեան վարժարանը մտաւ, ուր առաջին անգամ, ինչպէս որ կը կարծուի, սկսաւ ուսանիլ չափաքիտուելու:

Կարճ միջոցի մէջ ըսած ահաղին յառաջադրութիւններն հասկցուեցաւ թէ ասպակային մէջ մեծ մարդ մը պիտի ըլլայ:

Եւրիտի երկրաշարժութեան ետքը կարգապէս Տէքսոնիլը և Ուալթիսի անհանձնելու թուարանութիւնը, Յիւսթին գիտուններուն գիտութիւնը ամբարկէին անոնց զայն շատաւ, այլ սրտաւ անոնց հետ գիտութեան շաղկի մէջ. դեռ քսան հազար տարեկան չեղած գտած էր Հնուաւի Հալլի (Calcul des fluxions) եւ Լուսոյ Տէքսոնիլը, զոր համառօտակի հրատարակեց Ռալֆսոնի Ֆիլոսոֆիք Տրիպտիկի մէջ. բայց Հնուաւի հալլին նկատմամբ ամէն կողմէ կ'առաջադրուէր իւր հանգստութիւնը անխաղ պահելու և զգուսնող գիտական վէճերէն, պէտք եղած ընդլայնուած բազմաթիւ լինելով ճշմարտական իւր գիտելու:

Պատուաւ չափաքիտու, որուն աշակերտն և բարեկամն էր Նիւթըն, Բիշմարքի համալսարանին չափաքիտութեան ուսուցչութիւնէն կամուկէն հրաժարեցաւ այդ պաշտօնը Նիւթընի յանձնուելու համար:

Այգաք Նիւթընի կենաց այս թուականին մահաւոր կը սկսին այն աշխատասիրութիւնները, որ զինքը պիտի անմահացնէին, և ի վեր ճան դամենայն պահէր և զգուսնող գիտական վէճերէն (principes) անուշով գիրքը. զոր հրատարակեց Հալլէյի բաղձանաց եւ Լոնտօնի Արքեպիսկոս ընկերութեան աղերսանայ համար:

Հետագայ Բալուսթիլի անգամ եւ զաւ, փոքրամտեղ անօրէն կարգուեցուց և Աննա թագուհւոյն ասպետութեան աստիճանին բարձրացաւ. բայց յաջորդական վարձատրութեանց մէջ մեծադոյն եղաւ իրեն Արքեպիսկոս ընկերութեան նախագահ անուանելը, ուրիշ հոյակապ գիտական շատ զգաճուեցաւ. այս պատուարեք արագութեամբ մինչեւ իւր երկայն և փառաւոր կենաց վերջը:

Ասոնք են Նիւթընի կենաց գլխաւոր

կէտերը, բայց իւր աշխատասիրութեան պատմութեան մէջ աւելի մեծ տեղ մը կը գրաւեն զան իւր անհատական ներքին կենեքը:

Չենք ուզեր հոս յիշատակել Հնուաւի հալլին համար, տասն և եօթներորդ դարուն ամենէն մեծ երկու հանձարներուն, Նիւթընի և Լայպպիցի մէջ եղած գիտական պայքարը:

Նիւթըն չափաքիտութեան ամէն հիւրերուն մէջ անթիւ գիտութեան ըրած է, ասոնցմէ ամենէն մեծը Տիեզերական զրգողութիւնն է, որոյ վրայ ընթերցողաց ծանօթութիւն մը տալ հարկ կը համարեմ:

Տեսէք այս գիտին համար ինչ կ'ըսէ Լայպլա Փրանսուայի հոյակապ գիտնականը:

« Երկնային մարմնոց շարժման օրէնքը մեղ ծանօթացնելու փառք այս մեծ մարդուն վերապահուած էր. Նախախնամութիւնը անոր խոր հանձար մը պարգեւելով հանգեւած՝ ինամբ ունեցաւ զայն յարմար ժամանակ ստեղծելու »:

« Տէքսոնի չափաքիտութիւնը կերպարանափոխ ըրած էր կոր գիծերու տեսութեանց մէջ հանրահաշուի կիրառութեամբ, Յիւսթին իւր մեծագոյնի եւ փոքրագոյնի (Maxima et Minima) մէջ թանկարկը շատ զարգացուցած էր երկրաշարժութիւնը. Ուալթիս, Վրէն և Զիւս կէս մարմնոց շարժման վրայ ալ և այլ օրէնքներ գտած էին: Փալլէնոյ ծանրութեանց անկման վրայ գիտելու եւ ինչի՛ւ կը կերպարանայ զօրութեան վըրայ գործները՝ չորհանաւոր շարժմանց տեսութիւններուն (theories des mouvements circulaires) նախադրելուն էին:

Բէրլէր մոլորակներուն ոլորտները (orbites) ճանչցուած էր և կուսած էր նոյն իսկ տիեզերական ձգողութիւնը: Վերջապէս Հուլի շատ աղէկ հասկցած էր թէ մոլորակներուն շարժմանց պատճառը անոնց մէկ սկզբնական շարժման եւ Արեւիկան ձգողական զօրութեան բազմապիկան զօրութիւնն (Résultante) էր:

« Բայց գիտութիւնը կը սպասէր տակաւին Նիւթը

ճիշդ է. բայց Հոգին և Նիւթը երկ-
նային մարմնոց իրենց յատուկ սկզբնա-
կան շարժումի մը վարդապետութիւնը
չեմ ընդունիր իրեն ամեն՝ անսկիւնի-
ստիպարեանց հակառակ:

Տաք տարիէ ի վեր՝ այլ ևս չեմ խնդ-
կարիւր Նիւթը օրէնք ըստած մեծ
կուռքը, որուն այնքան գիտուններ եր-
կըրպագած են:

Մեծն Նիւթը 1727 մարտ 20ին մե-
ռաւ 84 տարեկան հասակին մէջ. իւր
երկար կեանքին մէջ անստղծաւ ստողութիւն
մը վայելելով, իւր հայրենիքը, ուր
մեծ մարդերն այնքան յարգի են, անոր
արտակարգ յուզարարութեամբ հուս-
դէս մը կ'առարկէ: Անոր մարմնը ըն-
դհամայնութիւնի արքայադասը տարուե-
ցաւ: Ամենէն մեծ ազնուականները ի-
բարու ձեռքէ կը խլէին դադարին ծո-
պերը և անիւն Անգլիայիներ խորին
լուծութեամբ ներկայ գտնուեցան թաղ-
ման արարողութեան:

Ե. Գ.

ԿԵՂԾ ՄԱՃԿ

Այս առժամանի հիւանդութիւնը
տարօրինակ արագութեամբ յառա-
ջացող, ծանր տաքնապէն և գրեթե
չէ շատ անգամ ալ մահ յառաջ
բերող սոսկալի բան մ'է, որուն
ենթարկուող փոքրիկ մանուկներուն
մեծ մասը՝ իրենց ծնողաց անդգու-
շութեամբ և անդադարաբար տե-
ղի տրուած անհոգութեանց զոհ
կ'երթան:

Տարօրինակ արագութեամբ իւ-
րաքանչիւր երկվայրկեանի մէջ մեծ
քայլերով յառաջացող այն դառնադէտ
հիւանդութեան անմիջական դարմա-
նը՝ առանց վայրկեան մ'իսկ կորսնցնե-
լու այս, մասին կատարեալ հմտութիւն
ունեցող բժշկի մը դիմելով՝ պէտք
եղածը անորինն է, որովհետեւ ե-
թէ անդուշտութեամբ ժամանակ ան-
ցունելով հիւանդին տաքնապէս ա-
ստիճանն աւելի աստիճանաւ ալ ա-
մէն դեղ և դարման անօգուտ կը
մնան և խեղճ վարակեալ մահուան
անագորոյն ճիրաններուն կը մատ-
նուի:

Այս ցաւալի գէպքին բուն պատ-
ճառը՝ ծնողաց անհոգութիւնը՝ կամ
լաւ եւս է ըսել հիւանդութեան ըս-
կըղման անհոգութիւնը չի ճանչնալով
տեղի տրուած անդուշտութիւնն է:
Ժամանակէ մ'ի վեր ցուօք արտի
տեսնուած զոհերուն անմիջական
դարման մը հայտնաբերելով՝ մարդ-
կային ազգին մեծ ծառայութիւն
մը մատուցանելու բաղձաբեր, «կեղծ
մաշկին» ինչ ըլլալը և անոր սկզբնա-
կան երեւոյթները կարողութեամբ
ներածին չափ նկարագրել զիս ստի-
պեց:

«Կեղծմաշկը» պարզապէս կոկոր-
դի բորբոքում մ'է: Մի քանի տա-
րիներէ ի վեր երկրորդական ամէն
կողմէ տարաբնուոյ և մեծ մասամբ
մեծ քաղաքներուն մէջ գրեթե ընդ-
հանրացած այս աղետալի հիւանդու-
թիւնը՝ փորակեալին դառնութեամբ սե-
նեկի ապակեանալ օդը ծծելէ, անոր
մարման (պոլպոս) թուրի նման ար-
տադրութիւններուն դուրսէ, հի-
ւանդին հետ առնչութիւն ունեցող
բժշկներուն և կամ վարակեալ խը-
նամուղ ընտանիքներուն հետ, յարաբե-
րութեամբ, վերջապէս հիւանդին ան-
հոգեան, զգեստին, խաղալիքներուն
չոչալումէն և հիւանդութեան ան-
նշմարելի սեբորրէ պարունակող կահ
կարասիներէն փոխանցող մանկա-
ճարակ հիւանդութիւնն է:

Այս սոսկալի և համաճարակ հի-
ւանդութիւնը տակաւին կոկորդին
մէջ «կեղծ մաշկը» չի գոյացած իսկ
կրնայ վարակել մատաղ մանուկ-
ները, հետեւաբար «կեղծ մաշկին»
գոյութիւնը զգալի եղած ատեն
աւելի դիւրաւ վարակիլն անտարա-
կոյս է. նա մանուսնէ՝ երբ հիւան-
դութեան ատարձանը ըստ բաւական
նի ծանրացած ըլլայ:

Արդէն հիւանդը երկարատեւ յա-
րաբերութեան զրկելէ գրեթե բոլո-
րովն անկարելի է և այս հիւանդու-

թեան աննշմարելի սեբորրէ, բակեղ-
ները, բժշկութեամբ հիւանդին շուրջը առ-
նուազն երկու ամսոյ չափ, իսկ անոր
յատկացած կահ կարասեաց վրայ ալ
տարիներով բոլոր իրենց թունաթափ
յատկութիւններով ողջ մնալուն այս
հիւանդութեան վարակչական յատ-
կութիւնը շատ զօրաւոր է:

Ինչպէս արդէն ըսինք, «կեղծ
մաշկը» մատուցող տղայաց յատուկ հի-
ւանդութիւն մ'է, ընդհանրապէս
երկուքէն մինչեւ հինգ տարեկան
տղայք ընդունակ են այս սոսկալի
տխտին, դեռահասներու և երիտա-
սարդներուն մէջ հազուադէպ. իսկ
ծերերուն մէջ բացառութեամբ կը
պատահի: Չմեռուան ցուրտ և խո-
նաւ օրերը ամառուան տաք և չոր
մայիսիկէն աւելի յարմար են կեղծ-
մաշկին յառաջ բերելու:

Կոկորդի բորբոքումը զգալէ յե-
տոյ տակաւին շողիքով շարժախառն
մաշկին վրայ հիւանդութեան որ և է
մէկ նշանը չի տեսնուած՝ առաջին
երկու երեք օրը և երբեմն՝ բացա-
ռութեամբ մինչեւ տասը կամ տասն
և հինգ օր տեւող թեթեւ հիւան-
դութեան ժամանակամիջոցը «զուար-
թութեան օրեր» կը կոչուի: Սերմե-
մերը վարակեալ մանկան կազմուած-
քին դիմադրութեան աստիճանին
համեմատ «զուարթութեան օրերը»
կ'երկարեն կամ կը կարճեցնեն:

«Կեղծ մաշկին» տեսակը թէեւ
բազմաթիւ է, սակայն խորագին
բժշկներէն (թուրուս) անոն անձը
այս հիւանդութեան տեսակը երեքի
բաժնելով՝ առաջին տեսակին «թե-
թեւ» երկրորդին «վտանգաւոր» իսկ
երրորդին «թունաւոր» անունը
տուած է:

«Թեթեւ» կոչուած տեսակը
սակաւ ինչ տարութիւնով, եւ սր-
տաբերութիւնով կ'սկսի. նշխներէն
(պատէմձիկ) շատ անգամ միայն
մէկին վրայ կ'որոշուի, ուստի
միայն հիւանդութիւնը որչափ թե-
թեւ և փոքր ինչ սպիտակացած կէս թե-
թեանիկ և փոքր պիտակ մը կը տես-
նուի, որ կեղծ մաշկը կազմուած հա-
մար վերջին աստիճան արագութեամբ
թանձրանալ կ'սկսի:

Կեղծ մաշկը՝ եթէ միայն կոկորդի
ծայրը դոյնալով թէ և հիւանդը վտան-
գէ զերծ է, բայց երբեմն խոչափողին
մէջ տարածուելով կրնայ վտանգաւոր
ալ ըլլալ: Հիւանդութեան այս թե-
թեւ տեսակը ետքի կամ ութ օր-
ուան մէջ կատարելապէս կը բժշկուի.
սակայն հիւանդութիւնը որչափ թե-
թեւ թունաւորումն ալ որ ատալի-
ճան անդոր ըլլայ «թեթեւ» տեսա-
կը «վտանգաւոր» տեսակին կրնայ
փոխուիլ:

Վտանգաւոր կամ տաքնապէս
կոչուած տեսակը տեւող և դուր ի-
րարու յաջորդելով կ'սկսի, հիւան-
դին դէմքը տփոյն և մարմնոյն մէջ
մի անգամին վրայ առ համարակա-
ր վարանց թմրութիւն և տկարութիւն
կը տեսնուի: Հիւանդութեան այս
տեսակին յատկութիւններն հետեւե-
ալ կերպով ճանչցուած են. Կեղծ
մաշկը, վերջապէս արտաբերութե-
ամբ, նշխները, բերանին մէջը,
փոքր լեզուն, ըմի ծակերն, շնչա-
փողերն վերջապէս պրկուները պա-
տելով մոխրագոյն երեւոյթ մը կըս-
տանան. այս տեսակին հետեւութիւն-
նը շատ անգամ մահ է. հիւան-
դութեան այս տեսակին (եթէ յա-
ջորդել թժշկել) տաքնապէս օրե-
րը հազիւ տասնեկու օր կը տեսն-
ն, սակայն հիւանդը բոլորովն ապա-
րիկելու համար առնուապէս ամիսէ մը
աւելի դարմանի կարօտ է. երբեմն
իսկ կեղծ մաշկը բնաջնջ ընելու
համար ամիսներով դարմանելու է
հիւանդը: Այս վերջինը «երկա-
րատեւ կեղծ մաշկ» ալ կը կոչուի:

Թունաւոր տեսակ. — Թունաւոր
տեսակը, զօրծարաններուն վրայի
կեղծ մաշկը անմիջական քա-
րացմամբ, վայրկեանական փոփոխ-
ւի գէպքեր, սաստիկ, չարագու-
շակ և արագ ընթաց տեղեք, սրտի
նեղութիւն, ազգին անդին զար-
նուէներ «կեղծ մաշկի» կազմուե-

լա միջոցին կայծակի նման իրարու
կը յաջորդեն և մահը 24 ժամուան
միջոցին կայծակի նման կը հասնի և
այն սոսկալի տեսարանին վերջ մը
կուտայ:

Բաց աստի կան նաեւ մի քանի
թունաւոր տեսակներ ալ, որք ա-
ռանց վերոգրեալ նշաններէն մին
ունենալու և կամ հիւանդը տաք-
նապէսներու, միայն վզին ուսեւեւա-
լով իրենց գոյութիւնը կը մատ-
նեն, զորս ճարտար բժիշկները
չուտով կը ճանչնան. բայց այս տե-
սակէն ետք «կեղծ մաշկը» ընա-
կերեք չի դարձանուիր և չափազանց
արագութեամբ հիւանդը մահու կը
դատապարտէ:

Այս հիւանդութիւնը տեսակ
տեսակ կերպարաններով երեւան
գալուն պատճառաւ, մատուց ման-
կանց պարանոցին և կամ կոկորդին
կողմերը փոքր ինչ անհանգստութիւն
նշմարուելուն պէս՝ կանխազգու-
շութեամբ՝ իսկոյն «կեղծ մաշկի»
մասնագէտ բժիշկներու գիմելով կա-
րելի եղածին չափ շուտ դարման
տանելու հոգ ընող ծնողք իրենց
սիրելի զաւակներն այս սոսկալի
հիւանդութեան զոհելէ զերծ են,
մինչդեռ հակառակ պարագային
մէջ միշտ կը առնուին:

Տ. Ն.

ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ

Մեախուրիւր փետրուարի մէջ

ՄԵՃԱԿԱՆ

Ծառերուն աւելցող հիւղերը կորե-
լու և թրթուրները ժողովելու է. սերմ-
նարանին մէջ նոր ծառերը տնկելու հա-
մար միտիլ և աղբ տարածելու է. բա-
րունակները պէտք է սկսիլ տնկելու,
ինչպէս նաեւ թէթ օդը մեզմ ըլլայ,
ինձորեններուն տնկարկութիւնը պէտք
է ընել, Կեղեւապարտոյն (գալէմ ա-
շը) 8 կամ 10 հարկումներ վեր՝ օգոս-
տոս ամսով մէջ պատուաստուած ծիւղե-
րուն ցորենները կտրուել է: Ծառերը
մամուռներէն ազատելու համար, անոնց
վրայ, հաւած կիր կամ սիւլմար sp ֆեր-
թափելու է:

Փետրուար

Փետրուարի մէջ, ինչպէս նաեւ ամ-
բողջ ձմեռը, ձեր մեղքներուն ընդմիջե-
ր մտքը զանոնք դուրս ելնելու չափ-
պիտու համար՝ երբեմն երբեմն ընկնելու
է փեթակը, անոր օդը փոխուած ըլլալուն
վտանգ ըլլալու համար, Մեղքաձեռները
սկզբին իրենց ընկալարանին մէջ թողելու
է զանոնք զարգացնելու համար. եթէ
ձիւնը յազալի հալուել, փեթակներուն
տաքեւ յարգ կամ միտիլ ցանկուել է. ու
յետոյ սառը կամ ձիւնը, ինչպէս նաեւ
սառած մեղքները, որք բիւլիները կը
դոցեն, կամաց մը փեթակին մէջէն հա-
նելու է: Յօդաւոր դէմ աղէկ պահելու
է փեթակը. իրեն «սնունդ» ցանցառ
լովի մը փայ խոլը ծեղուած շաքար
դնելով՝ փեթակին խոլորակը շարժելու
է: Միմոռնաք բնաւ, մեղքներուն մոտ,
ամանի մը մէջ, աղով խառն ջուր դնե-
լու, զոր մամուռով ծածկելու է: Եթէ
տեսնէք որ 8 աստիճան բարեխառնու-
թեան մը աղիւնցութիւնն մեղքներուն
մէջ մասը դուրս կ'ելլի փեթակէն, միւս
մնացած մասն ալ դուրս հանել քանա-
լու է:

ՀԱՅԻՐԱԿ

Այս ամսով մէջ հաւերուն և բաղե-
րուն հաւիթները թուրս դնելու է:
Հաւերին հոգը չոր և մաքուր պահելու
է միշտ: Նոր ծնած վառեակները դուրս
հանելու չէ և զանոնք լուսաւոր և օդա-
ւէտ հաւեոցներուն մէջ դնելու է: Հնդ-
կահաւերը ամէնու ստիպելու է: Ածա-
նութիւնը զրգուելու համար վարան և
նեւ ցորեն տալու է: Ջանացէք այս մի-
ջոցին միշտ պարարտացնել զանոնք:

ԲՐԻՉ

Քաղաքական լուրեր

ԱՆԳԼԻՈՅ ՎՐԱՅ

ԱՐԾԱՒԱՆՔԻ ՄԸ ԿԱՐԵՆԻՈՒԹԻՒՆԸ

Թրանսպալի խնդրոյն առթիւ,
վերջերս Անգլիոյ և Գերմանիոյ մէջ

ծագած դժուրութեան ատեն, Գեր-
մանիոյ մէջ շատ բան գրուեցաւ՝ Անգ-
լիոյ դէմ արշաւանքի մը կարելիութե-
ան վրայ:

Այս դրութեանց մէջ ամենէն
կարեւորներն են՝ Պէռլինի զինուո-
րական թերթի մը մէջ Պառն Լուծ-
վիցի «Փորձք Անգլիոյ վրայ արշաւա-
նաց» խորագրով յօդուածները:

Այս յօդուածներուն մէջ հեղի-
նակը կը յայտարարէ թէ վերջին տա-
րիներուն մէջ Ֆրանսա, Ռուսիա,
Գերմանիա և Իտալիա դադարալի
աշխարհավարութիւն մը բռնած ըլ-
լանուն՝ վաղ կամ անագան Անգ-
լիոյ հետ վէճի պիտի բռնուին:

Ըստ հեղինակին, այս գաղթային
խնդրոյն կարեւոր լուծում մը տա-
լու համար. կուր՝ ոչ թէ գաղթա-
վարներուն՝ այլ նոյն իսկ Եւրո-
պիոյ մէջ տեղի ունենալու է. հետե-
ւաբար Անգլիոյ վրայ արշաւանաց
կարելիութեան հարց մը վերին աս-
տիճան կարեւոր է:

Պառն Լուծվից, զինուորական
արուեստին պատմութիւնը ի ձեռին,
կը հաստատէ թէ Բրիտանական կըզ-
գիները օտար տէրութեանց յար-
ձակումներուն դէմ պաշտպանուե-
լու գործիւնը՝ դարէ մը ի վեր մեծ
փոփոխութիւն մը կրած չէ և թէ
Անգլիա երբեք իւր արամագրու-
թեան ներքեւ կարեւոր բանակ մը
ունեցած չէ, և ունեցած բանակներն,
կուղէ յանցելուն ըլլայ կուղէ
նշխային մէջ, միշտ վարձկաններէ և
կամաւորներէ բաղկացած են. հե-
տեւաբար իւր այժմու բանակը դի-
մադրական բարձրագոյն աստիճանի
կազմակերպութիւն մը չունի:

Սակայն Պառն Լուծվից կը խոս-
տովանի թէ՝ անկուսակցական պա-
տերազմներէն ետքը Անգլիա աշխար-
հի ամենէն զօրաւոր ծովային տէրու-
թիւնը եղած է միշտ և իւր ծովային
զօրութիւնը Բրիտանական արշալոյս-
նալագոսին վրայ ու է արշաւանք մը
ընելու կարելիութիւնը ջնջած է անց-
եալին մէջ:

Բայց այժմ՝ պարագաները փոխ-
ուած են. քիչ ժամանակ առաջ Փը-
նանաւ և Ռուսիա միացան և Անգ-
լիա, որ ի սփիւռս աշխարհի ցրուած
պետութիւն մը ունի պաշտպանելիք.
իւր դադարալիքները մասամբ օտար
յարձակմանց դէմ պաշտպանած ա-
տեն, պիտի չկրնայ Բրիտանական
արշալոյսնալագոսը պաշտպանել Մանչի
մէջ միացեալ Ռուսական և Փրան-
սական զօրութեանց:

Պառն Լուծվից դիտել կուտայ
թէ քանի որ Անգլիացիք յաճախ ար-
շաւած են ցամաքային Եւրոպիոյ
վրայ, արդեօք ցամաքային տէրու-
թիւններն ալ փոխադարձաբար դի-
մաւ չ'են կրնար յարձակել Անգլիոյ
վրայ:

Յետոյ Պառնը քաղաքական
պատմութեան վրայ ակնարկ մը նե-
տելով՝ կ'ըսէ թէ Փրանսացիք 1690ին
Լուի Ժ. Ի օրով և 1805ին ալ Նա-
բուէն առաջնոյն օրով այս տեսակ
արշաւանքներու վրայ խորհեցան
բայց չգործադրեցին:

Յօդուածագիրը երկարօրէն Նա-
բուէնի պատրաստութեանց վրայ
խօսելէն ետք՝ կ'ըզրակացնէ թէ
այն ատեն այս տեսակ արշաւանք մը
կը յաջողու և ֆրանսացիք առիթ
ձեռքէ փախուցնէին:
Յետոյ անցնելով ներկայ ժամա-
նակին մէջ արշաւանքի մը կարելիու-
թեան կը յարէ թէ հիմա այս տե-
սակ գործողութիւն մը, շնորհիւ փո-
խադարձութեանց դիւրութեան և ե-
րկարակամութեան կիրառութեան,
աւելի հեշտ է:

Յօդուածագիրն եղբակցութիւն-
ները խորին ուշադրութեան առար-
կայ արժեքած են Անգլիոյ և Գերմա-
նիոյ մէջ:

Վերջին ամենէն կարեւոր քաղաքա-
կան լուրն է Արիւիկի մէջ Իտալացուց
կրած մեծ պարտութիւնը:

Յիւսու հաղթը Հապէններու դէմ
ճակատած 15000 Իտալացիք ջիւրուցան

եղան. ընդհանուր սպարապետ զօրա-
վար Պարաթիէրի և այլ չորսավարք վի-
րաւորեցան. սպանեցին և զինուորնե-
րէն շատերը Հապէնաց ձեռքը գերի ին-
կան:

Իտալիա, Հապէնաց Սորոմոնեան Մե-
նելը կայսեր յառաջնադաւանութիւնը
արգիլելու համար, 70000 զինուոր ի գէն
կոչեց: Թէ և կառավարութեան ընդդի-
մադիր կուսակցութիւնը, ի սկզբանէ ան-
տի, Արիւիկեան արշաւանքին կը հակա-
ռակի. բայց, այսօր, պարտեալ Իտա-
լիա այնպիսի ձախարհ վիճակի մը մէջ է
որ, տարակոյս չկայ թէ, ամէն կուսակ-
ցութիւններ միանալով Իտալիոյ վար-
կը անվար պահելու պիտի աշխատին:

Ազգային լուրեր

Երկուշաբթի, Ամեն. Ս. Պատրիարք
Հօր նախագահութեամբ, Կրօնական Ժո-
ղովն Պատրիարքարանի մէջ Նիստ ըրաւ
և խորհրդակցութիւններ կատարեց:

Վաղը կիրակի, եկեղեցւոյ աւարտու-
մէն ետքը, Բերայի աղկանց Արհեստա-
գիտական վարժարանին սրահին մէջ ցոյ-
ցի պիտի դրուին սանուհիներուն տասն
և հինգօրեայ ձեռագործական աշխա-
տութիւնները, որ պիտի ծախուին բա-
ցառիկ աժան գիներով:

Ծախու պիտի հանուին նաեւ նախ-
կին Արհեստանոցին մէջ շինուած ձեռ-
մակեղէնները:

ՀԵՌԱԳԻՍԼՈՒՐԻՔ

Լուիս.—Պ. Կոչըն, ծովային նախա-
րարը, գումարման մը մէջ յայտարարեց
թէ Անգլիոյ և Գերմանիոյ յարաբերու-
թիւնները յոյժ սիրալիք են:

Պ. Կոչըն ըսաւ նաեւ թէ Մեծին
Բրիտանիոյ մեկուսացեալ դերքն տկա-
րութեան հետեւանք չէ, այլ որովհե-
տեւ Անգլիա կ'ուզէ պահել իւր գործո-
ւթեան ազատութիւնը:

Հռոմ.—Զօրավար Պարաթիէրի տեղ՝
Արիւիկեան Իտալական բանակին ապա-
րապետ կարգուեցաւ զօրավար Պալտի-
սէրս, որ Հապէնաստան ուղեւորեցաւ:

Նաթուլ.—Ումպէրթ Թագաւորը չո-
գեմակոյի նստած՝ Հապէնաստան զօրք
փոխադրող նաւերուն հետ՝ քանի մը
մըն տեղ ընկերակցեցաւ:

Նաւազները կայմերուն վրայ շար-
ուած եւ զինուորները բարեւի կե-
ցած մարերան «Կեցցէ Թագաւոր» ա-
ղաղակեցին:

Վաշեկիլը.—Շատ մը միճարանու-
թիւններէ ետքը, Միացեալ Նահանգաց
երեսփոխանական ժողովն ընդհանր
մասնութեամբ ընդունեց Մեախուրային
այն որոշումն, որ օրինաւոր պատերազ-
միկ կը ճանչնայ Բուպպիները:

Լոնտոն.—Միտայ

